

**ԴԵՐԱՆՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵՐՈՂ ՀԻՄՔ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ՀԱՄԱՐԴԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՂԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. զուգադրական քննություն, բառաբարդում, հարադրում, համադրական, վերլուծական, կադապար, դերանուն, գոյական, շարահյուսական, իմաստային:

Ключевые слова и выражения: сопоставительное исследование, словосложение, сопоставление, синтетический, аналитический, модель, местоимение, существительное, синтаксический, семантический.

Key words and expressions: comparative analysis, compounding, juxtaposition, synthetic, analytical, pattern, pronoun, noun, syntactic, semantic.

Հայտնի է, որ ներկայումս լեզուների տիպաբանական-զուգադրական քննությունը մեծ ուշադրության է արժանանում լեզվաբանների կողմից՝ կարևորվելով թե՛ տեսական լեզվաբանության և թե՛ լեզուների գործնական ուսուցման առումով: Մյուս կողմից՝ կարևորվում են նաև այս կամ այն լեզվի բառակազմական համակարգին նվիրված ուսումնասիրությունները, քանի որ բառակազմական տարբեր եղանակներով անընդհատ նորանոր բառեր են կազմվում՝ հարստացնելով լեզվի բառային կազմը, հետևաբար նաև տվյալ լեզվով խոսողների բառապաշարը:

Սույն հոդվածի նպատակն է.

1. հայերենի և անգլերենի զարգացման արդի փուլում՝ համաժամանակյա կտրվածքով ուսումնասիրել այն բաղադրությունները, որոնցում դերանունը հանդես է գալիս որպես սերող հիմք, իսկ բաղադրող հիմքն է գոյականը,

2. քննել Դ+Գ (Pron.+N) կադապարով բաղադրությունները՝ ըստ բաղադրիչների շարահյուսական և իմաստային հարաբերության և բառաբարդման կամ հարադրման արդյունքի, այսինքն՝ թե ինչ խոսքի մաս է կազմվում Դ+Գ կադապարով:

Ըստ Է. Աղայանի՝ բարդ բառի առաջին (ձախակողմյան) բաղադրիչը սերող հիմքն է, իսկ երկրորդ (աջակողմյան) բաղադրիչը՝ բաղադրող¹:

¹ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 248:

Հայերենում և անգլերենում Դ+Գ կաղապարով կազմվում են թե՛ համադրական բարդություններ և թե՛ վերլուծական բաղադրություններ: Ինչպես հայտնի է, «...համադրական կառույցների մեջ ելակետային միավոր է ընդունվում բառակազմական հիմքը, իսկ վերլուծականների մեջ՝ գերադաս անդամը՝ առանձին բառադադրիչը»²:

Դ+Գ կաղապարով հայերենում կազմվում են *ածականներ*, *մակբայներ*, նաև *գոյականներ* և *դերանուններ*: Սրանց բաղադրիչների միջև կա հատկացուցիչ-հատկացյալի և որոշիչ-որոշյալի հարաբերություն: Հարկ է նշել, որ ընդհանրապես դերանունները բառակազմությանը քիչ են մասնակցում և հավասարաթեք կիրառություն չունեն: Ըստ Գ. Ջահուկյանի՝ դրանք հազվադեպ են հանդես գալիս որպես ածանցելի հիմքեր՝ «լինելով ցուցաբերողական և ոչ անվանողական բառեր»³: Այդպիսիք են անձնական *ես*, ստացական *յուր*, ցուցական *նույն*, հարցահարաբերական *ուր*, *երբ*, *ինչ*, *քանի* դերանունները:

Հայագիտության մեջ նաև կարծիք կա, որ դերանունները բարդությունների կազմությանը որպես բաղադրիչներ իրենց բուն կիրառությամբ չեն մասնակցում, քանի որ դրանց մի մասը բառակապակցություններում հանդես է գալիս որպես գոյական (*ես*, *դու*, *սա*, *ոչ* և այլն), մյուս մասը՝ որպես ածական (*այս*, *այսպիսի*, *ինչպիսի*, *ո՞ր* և այլն), երրորդ մասն էլ՝ որպես մակբայ (*այսպես*, *այսչափ* և այլն)⁴:

Այդ իսկ պատճառով հայ բառակազմագիտության մեջ հաճախ առհասարակ չի առանձնացվում Դ+Գ կաղապար, սակայն մեր համոզմամբ ինչպիսի նշանակությամբ էլ որ դերանունները հանդես գան բարդության մեջ՝ իրենց բուն խոսքիմասային թե ոչ, այնուամենայնիվ, դրանք որպես խոսքի մաս մասնակցում են բարդությունների կազմությանը, հետևաբար Դ+Գ կառույցները չեն կարող անուշադրության մատնվել և չքննվել:

Այսպես, ներկայացնենք Դ+Գ կաղապարով կազմված բարդություններն ըստ դերանունների համապատասխան տեսակների:

Անձնական դերանուն+գոյական կաղապարը կազմվում է հիմնականում *ես*, *ինքք* (*ինքն*), *յուր* դերանուններով: *Ես* անձնական դերանունը բարդություններում առկա է ոչ թե որպես առաջին դեմք ցույց

² Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016, էջ 23:

³ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 206:

⁴ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 26:

տվող բառ, այլ ունի «անհատ, անձ» իմաստը, ինչպես՝ *եսամոլություն, էսակենտրոն*⁵:

Ի տարբերություն *էս* դերանվան՝ *ինքն* դերանունը բառակազմական տեսանկյունից ավելի կենսունակ է: Բազմաթիվ բարդություններ են կազմվում *ինքն* դերանվան և գոյականի կապակցությամբ, ինչպես՝ *ինքնաբոցավառում, ինքնաբուժում, ինքնաբուն, ինքնաբուսակ, ինքնագարշանք, ինքնագիտակցություն, ինքնագլուխ, ինքնագյուտ, ինքնագնահատում* և այլն: Այս բարդություններում *ինքն* դերանունը կամ ցույց է տալիս, որ երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողությունն ինքնուրույն է կատարվել, կամ այն, որ երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողությունն իրեն է ուղղված: *Ինքն* առաջնաբաղադրիչով կազմություններում որոշիչ-որոշյալ հարաբերությունը մթագնած է⁶:

Ինքն դերանունից բացի՝ գոյականների հետ կապակցության մեջ է մտնում նաև *յուր* դերանունը: Այն բառակազմության մեջ արդեն գործուն չէ, սակայն դրանով և գոյականով կազմված որոշ բարդություններ գոյություն ունեն, ինչպես՝ *յուրաժամ, յուրակերպ, յուրահաշիվ, յուրահնար, յուրաշահ, յուրապատում, յուրատեսակ, յուրատիպ, յուրօրինակ* և այլն:

Բարդությունների կազմությանը մասնակցում է նաև **ցուցական դերանունների** մի մասը, օրինակ՝ *այս, այդ, այն, նույն, սույն* դերանուններով և գոյականներով կազմվում են հետևյալ բարդությունները՝ *այնկողմ, այնպահ, այսկողմ, այսօրինակ, դույնչափ, դույնօրինակ, նույնաբնույթ, նույնաջերմություն, նույնասեռ, սույնօրինակ* և այլն: Ցուցական դերանուններից բառակազմական տեսանկյունից ամենագործունն է *նույն* դերանունը:

Փոխադարձ դերանուն+գոյական կաղապարի կազմությանը մասնակցում է *իրար* դերանունը, ինչպես՝ *իրարանցում, իրարամարտ, իրարահասկացողություն*: «Միմյանց, մեկմեկի, մեկմեկու փոխադարձ դերանուններով բառեր չեն կազմվում»⁷:

Որոշյալ դերանուն+գոյական կաղապարով բարդություններ են կազմվում *ամեն, ողջ, բոլոր, համայն* դերանուններով, ինչպես՝

⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Եր., 1956, էջ 255:

⁶ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 27:

⁷ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 256:

⁸ *Ամեն* դերանվամբ բարդությունները կարող են երկակի ըմբռնում ունենալ: Լեզվաբանների մի մասը *ամեն* բառին վերագրում է միայն ածանցական իմաստ՝ գերադրական աստիճանի նշանակությամբ (տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 241-242), սակայն եթե *ամեն*-ը բարդության մեջ պահպանում է իր նյութական իմաստը, ապա այն պետք է ընկալել «բոլոր, համայն»

ամենագործություն, ամենապոեմ, ամենասիրտ, բոլորադեզ, բոլորալուսին, համայնապետ, համայնափոս, ողջախորհուրդ, ողջակիզում, ողջամարմին և այլն:

Անորոշ դերանուն+գոյական կաղապարի իրացմանը մասնակցում է հիմնականում *այլ* դերանունը: **Այլ+գոյական** կաղապարով բարդություններ են, օրինակ՝ *այլաբան, այլաբարբառ, այլաբնույթ, այլաբուն, այլագույն, այլադավանություն, այլաժամանակ, այլալեզու, այլախոհ, այլախումբ* և այլն:

Հարցահարաբերական դերանունների և գոյականի կապակցությամբ կազմված բարդություններ քիչ են հանդիպում: Կաղապարը կազմվում է *ինչ* և *որ* դերանունների միջոցով՝ *ինչպիսի, որչափ*:

Ժխտական դերանուն+գոյական կաղապարի իրացմանը մասնակցում է *ոչինչ* դերանունը՝ հնչյունափոխված ձևով՝ *ոչնչատեսիլ*:

Դերանվան և գոյականի կապակցությամբ կարող են կազմվել հետևյալ խոսքի մասերը.

ա) **գոյականներ**՝ *ամենաբանտ, այլագրություն, ինքնաբաշխում, ինքնաբարձիչ, ինքնաբացարկ, ինքնաբացում, ինքնաբեռնիչ, ինքնաբնութագրություն* և այլն,

բ) **ածականներ**՝ *ամենաբախտ, ամենագույն, ամենալույս, ամենածաղիկ, ամենապատում, բոլորածայր, բոլորածիր, նույնաթույր, նույնանիշ, ողջամիտ* և այլն,

գ) **մակբայներ**՝ *այդժամ, այդկերպ, այլակերպ, այնժամ, այսկերպ, այսկույս* և այլն,

դ) **դերանուններ**՝ *այնչափ, այսչափ, ինչպիսի, նույնչափ, որչափ* և այլն:

Այս կաղապարով բարդությունների մեջ ևս առանձնանում են հոդակապավոր և անհոդակապ տեսակները: **Հոդակապավոր** են, օրինակ՝ *ինքնադավադրություն, ինքնադատապարտյալ, համայնակենցաղ, համայնապատկեր, համայնապատում, նույնադեր, նույնասեռ, նույնասկիզբ, նույնավերջ, նույնավիճակ* և այլն:

Անհոդակապ են *այլադանդ, այլանուն, ամենաշխարհիկ, այնպահ, այսժամ, այնտեղ, բոլորաչք, սույնօրինակ, ողջանդամ, ողջերթ* և այլն:

Անգլերենում ևս կարող ենք առանձնացնել **Pron.+N** կաղապարի ենթակաղապարներ: Այս կաղապարի իրացմանը մասնակցում են

նշանակությամբ (հմմտ. *ամենապետ=ամենքի պետ*): *Ողջ, ամեն, բոլոր* դերանունները և *այլ*-ը գրաբարում ածականներ էին, և բարդությանը մասնակցում էին իբրև ածականներ. *այլ*-ը նաև մակբայ էր (տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 27):

անձնական (personal), ստացական (possessive), որոշյալ (defining), անորոշ դերանունները (indefinite) և ժխտական (negative) no դերանունը:

Համադրական բարդությունների կազմությանը մասնակցում են **անձնական դերանունների (personal pronouns)** ոչ թե ուղղական, այլ խնդրային հոլովով⁹ դրված ձևերը: *Him, her, them* դերանունների և *self* «ինքն» գոյականի ու դրա հոգնակի թվի ձևից՝ *selves* կապակցությունից կազմվում են *himself/herself* «նա ինքը», *ourselves* «մենք ինքներս», *themselves* «նրանք իրենք» **անդրադարձ դերանունները (reflexive pronouns)**:

Ստացական դերանուն+գոյական (possessive pronoun+noun) կաղապարով ևս կազմվում են **անդրադարձ դերանուններ**, ինչպես՝ *myself* «ես ինքս», *yourself* «դու ինքդ», *ourselves* «ինքներս», *yourselves* «ինքներդ», որոնք համադրական բարդություններ են:

Ցուցական դերանուն+գոյական (demonstrative pronoun+noun) միայն *this* և *that* դերանունների և *way* գոյականի միջոցով *thisaway* «այս ուղղությամբ», *thataway* «այդ ուղղությամբ» **մակբայներն** են կազմվում:

Որոշյալ դերանուն+գոյական (defining pronoun+noun) կաղապարով բարդություններ են կազմվում *every* դերանվան և տարբեր գոյականների կապակցությամբ, ինչպես՝ *everybody* «ամեն ոք», *everyplace* «ամենուր», *everything* «ամեն ինչ» և այլն: Այս կաղապարով մի կողմից կազմվում են **գոյականներ՝** *everyman* «սովորական էակ (տղամարդ)», *everywoman* «սովորական էակ (կին)», մյուս կողմից՝ **որոշյալ դերանուններ՝** *everybody* «բոլորը, ամենքը», *everything* «ամեն ինչ», մակբայներ՝ *everyplace* «ամենուր», **ածականներ՝** *everyday* «ամենօրյա» և այլն: *All* «բոլոր, ողջ» որոշյալ դերանվան և գոյականի կապակցությամբ կազմվում են ոչ թե համադրական, այլ վերլուծական տիպի բաղադրություններ: Կան նաև *other* որոշյալ դերանվամբ և գոյականի միացությամբ կառույցներ՝ **գոյականներ՝** *otherworld* «հանդերձյալ աշխարհ», *otherworldliness* «չնաշխարհիկություն», **ածականներ՝** *otherguess* «տարբեր, ուրիշ», **մակբայներ՝** *otherwise* «այլ անգամ» և այլն:

Անորոշ դերանուն+գոյական (indefinite pronoun+noun) կաղապարով բարդությունների կազմությանն են մասնակցում *any, some* և *one*

⁹ Անգլերենի քերականության մեջ տարբերակում են անձնական դերանունների հոլովական երկու ձևեր՝ ուղղական հոլովով և (օրյեկտային) խնդրային հոլովով դրված դերանուններ: Ուղղական հոլովով դրված են *I, he/she, it, you, we, they*, իսկ խնդրային հոլովով՝ *me, him/her, it, you, us, them* դերանունները. վերջիններս նախադասության մեջ հանդես են գալիս խնդրի շարահյուսական պաշտոնով (տե՛ս B. Каушанская и др., Грамматика английского языка, Л-град, 1973, էջ 54, Y. Mkhitarian, A. Chubaryan, Theoretical English Grammar /seminars/, Եր., 2013, էջ 141):

դերանունները: Որպես արդյունք՝ մեծ մասամբ կազմվում են **մակբայներ**՝ *anyplace* «ցանկացած տեղ», *anywise/anyways* «ցանկացած ձևով», *someday* «օրերից մի օր», *somedeal* «որոշ չափով, մասամբ», *someplace* «ինչ-որ տեղ», *sometimes* «երբեմն», *someway* «ինչ-որ կերպ», երբեմն նաև **ածականներ**՝ *onetime* «երբեմնի», **դերանուններ**՝ *anybody* «որևէ մեկը», *anything* «որևէ բան», *somebody* «ինչ-որ մեկը», *something* «ինչ-որ բան», *oneself* «ինքնիրեն» և այլն:

Ժխտական դերանուն+գոյական (negative pronoun+noun) կաղապարի իրացմանը մասնակցում է *no* դերանունը, որով կազմվում են նոր ժխտական դերանուններ՝ *nobody* «ոչ ոք», *nothing* «ոչինչ»: “One” որոշյալ և “no” ժխտական դերանուններով ավելի շատ կազմվում են վերլուծական բաղադրություններ, որոնց կանոնադառնանք մեր աշխատանքի համապատասխան գլխում:

Pron.+N կաղապարով կազմվում են նաև վերլուծական բաղադրություններ: Այս կապակցությամբ վերլուծական բաղադրություններ կազմվում են հետևյալ կաղապարներով՝

ա) անձնական դերանուն+գոյական (personal pron.+N). այս կաղապարով կազմվում են այնպիսի վերլուծական բաղադրություններ, որոնցում առաջին բաղադրիչը կա՛մ երկրորդի սեռն է մատնանշում, ինչպես՝ *she-crab* «էգ ծովախեցգետին», *she-devil* «կախարդուհի»¹⁰, կա՛մ որևէ հատկանիշ, ինչպես՝ *he-man* «մկանուտ, հուժկու տղամարդ»: Կաղապարի իրացմանը հիմնականում մասնակցում են անձնական դերանունների ուղղական հոլովով ձևերը, սակայն կա նաև I- «ես» դերանվան խնդրային հոլովով դրված ձևի և գոյականի միացությամբ կազմված *me generation* «նյութապաշտ սերունդ» բաղադրությունը:

բ) Որոշյալ դերանուն+գոյական (defining pron.+N), ինչպես՝ *all-American* «ուղնուծուծով ամերիկացի», *all-purpose* «բազմանպատակ, համապիտանի», *all-star* «լավագույն աստղերից (երգիչ, դերասան և այլն) կազմված», *other-direction* «արտաքին ազդակներով պայմանավորված վարքագիծ», *each-way/both-way* «երկկողմանի»,

գ) Ժխտական դերանուն “no”+գոյական (negative pron. “no”+N), ինչպես՝ *no-account* «անկարևոր, անարժեք», *no-fault* «պարտադիր»,

դ) անդրադարձ դերանուն «self»+գոյական (reflexive pron. “self”+N), ինչպես՝ *self-absorption* «ինքնամոլություն», *self-analysis* «ինքնավերլուծություն», *self-contempt* «արհամարհանք սեփական անձի

¹⁰ Սրանք առողրական հարադրություններ են:

հանդեպ», *self-respect* «հարգանք սեփական անձի հանդեպ», *self-confidence* «ինքնավստահություն» և այլն:

Այս կաղապարով կազմվում են հիմնականում **գոյականներ**՝ *all-friend* «կարգին ընկեր», *he-male* «առնական տղամարդ», և **ածականներ**՝ *all-day* «ողջ օրը տևող», *all-night* «ողջ գիշեր տևող», *no-brained* «անուղեղ», *no-calorie* «առանց կալորիաների», *no-knock* «անսպասելի», *no-brow* «ինտելեկտ չունեցող»:

Թեև երկու լեզուներում դերանունները բառակազմությանը քիչ են մասնակցում և բառակազմական դերի տեսանկյունից հաճախ նաև «...զարմանալի չափով անմիօրինակ են»¹¹, սակայն, այնուամենայնիվ, իրենց դերն ունեն հայերենի և անգլերենի բառապաշարի հարստացման և զարգացման գործում: Առհասարակ, այս կամ այն կաղապարը բառակազմական տեսակետից «կենսունակ» է այն դեպքում, երբ դրանով կազմված նոր բառերը հեշտությամբ են ըմբռնվում տվյալ լեզվով խոսող հանրության բոլոր անդամների կողմից, բոլոր դեպքերում «ընդունելի» են և ճանաչվում են որպես տվյալ լեզվին պատկանող միավորներ¹²:

Ս. Կարապետյան

Դերանունը որպես սերող հիմք հայերենի և անգլերենի համադրական և վերլուծական բաղադրություններում Ամփոփում

Հոդվածում քննվում են անգլերենի և հայերենի **Դ+Գ** կաղապարով համադրական բաղադրությունները և վերլուծական բաղադրությունները՝ ըստ բաղադրիչների շարահյուսական, իմաստային հարաբերությունների և ըստ բառաբարդման կամ հարադրման արդյունքի, այսինքն՝ թե ինչ խոսքի մաս է կազմվում **Դ+Գ** կաղապարով: Քննվող լեզուների **Դ+Գ** կաղապարով բաղադրություններն առանձնացվում են ըստ բաղադրիչ դերանունների տեսակների՝ անձնական, ցուցական, փոխադարձ, որոշյալ, անորոշ, հարցահարաբերական, ժխտական:

¹¹ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 252:

¹² Ste 'u O. Akhmanova (ed.), Patterns and Productivity, M., 1973, էջ 11:

С. Карапетян

**Местоимение как первый (левый) компонент синтетических
словосложений и аналитических конструкций армянского и английского
языков**

Резюме

В статье рассматриваются синтетические соединения и аналитические конструкции Мест.+Сущ. в армянском и английском языках по синтаксическим и семантическим отношениям компонентов, а также по результату образования или сопоставления сложных слов, т.е. какие части речи образуются по форме Мест.+Сущ. Структуры по форме Мест.+Сущ. в исследуемых языках по разрядам выделяются местоимений: личные, указательные, возвратные, определенные, неопределенные, вопросительно-относительные, отрицательные.

S. Karapetyan

**Pronoun as the first (left) component in the synthetic compounds and
analytical structures of armenian and english**

Summary

The article examines the synthetic compounds and analytical constructions in Armenian and English formed with the pattern Pron. + N according to the syntactic and semantic relations of the components, as well as to the outcome of the compounding or juxtaposition, i. e. what parts of speech are formed with the pattern Pron. + N. The Pron. +N patterned structures were analyzed separately according to the types of the component-pronouns- personal, demonstrative, reciprocal, defining, indefinite, interrogative-relative, negative.